ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/33» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05.02.2019թ.
ժամը 15[30]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա.Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/33» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակից(ներ)ին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակից(ներ)ի՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 Առաջին տեղը գբաղեցրած մասնակից(ներ)ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/33» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

ա) «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում է՝

- 3-րդ չափաբաժնի մասով՝ ապրանքային նշանի (առևտրային անուն), արտադրողի անվանման, մատակարարման ժամանակ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի և «ГОСТ»-ի մասին տեղեկատվությունը,
- 15-րդ չափաբաժնի մասով՝ ապրանքային նշանի (առևտրային անուն), արտադրողի անվանման, մատակարարման ժամանակ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի, արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ) մասին տեղեկատվությունը,
- 18 և 21-րդ չափաբաժինների մասով՝ ապրանքային նշանի (առևտրային անուն), մատակարարման ժամանակ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի, արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրի (ISO, GMP, CE Mark կամ այլ) մասին տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը,
- 19, 22, 28, 29, 31, 35, 37 և 38-րդ չափաբաժինների մասով՝ ապրանքային նշանի (առևտրային անուն) մասին տեղեկատվությունը, մատակարարման ժամանակ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը:

բ) «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից 24 և 26-րդ չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում է մատակարարման ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացնելու մասին տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից(ներ)ին՝ առաջարկելով մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղ(եր) զբաղեցրած մասնակից(ներ)ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չուն(ի)են: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.3 Վերոնշյալ մասնակից(ներ)ը սահմանված ժամկետում շտկել (են)է արձանագրված անհամապատասխանությունները:

1.4 07.02.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակից(ներ)ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/33» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջին(ներ)իս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից(ներ):

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/33» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Մ. Գալստյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան